ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ԾԱՂԿՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

<< 04 >> հուլիս 2019թ
№ - 11

ՀՀ Շիրակի մարզ , գ. Ծաղկուտ

ՀՀ Շիրակի մարզպետ
Տ. Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան

Հայտնում եմ Ձեզ, որ հանրակրթական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի համաձայն (ՀՀ ԿԳ նախարարի 15.04.2013 թվականի N396-Ն հրաման , ՀՀ արդարադատության նախարարության պետական գրանցման N11013214 30.05.2013թ.)2019թ. հուլիսի 3-ից հայտարարվել է մրցույթ քիմիա , կենսաբանություն և անգլերեն առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար, որի տեքստը հրապարակվել է <<Կրթություն>> շաբաթաթերթի 03.07.2019թ-ի թիվ 27 համարում:
Կից ներկայացվում են հայտարարության տեքստը:

Դպրոցի տնօրեն Վ. Պողոսյան

ԴՐԱՎԻ ՄԵՐԺՄԱՆԱՆ
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՐՈՒՄ
Մուտք թիվ 10488-19
04 07 19

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի « Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա (4 դասաժամ՝ 27000 դրամ աշխատավարձ), կենսաբանություն (4 դասաժամ՝ 27000 դրամ աշխատավարձ) և անգլերեն (9 դասաժամ՝ 61000 դրամ աշխատավարձ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է/Ձև 1 /,

2.Փաստաթուղթ/դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 -րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/,

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի,հավաստագրերի պատճենները/դրանց առկայության դեպքում/,

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019թ. հուլիսի 31 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019թ. օգոստոսի 6 -ին՝ ժամը 13:00-ին, Շիրակի մարզի Ծաղկուտի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Ծաղկուտ փողոց 2, շենք N3 :

Տեղեկությունների համար զանգահարել 094135661 հեռախոսահամարով:

<<Ծաղկուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի
տնօրեն Վ. Պողոսյան